ՀՈՒՇԱԳԻՐ

Արարատի մարզպետարանի (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզի վարչակազմի (Ռուսաստանի Դաշնություն) միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցություն հիմնելու մասին

Արարատի մարզպետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզի վարչակազմը (Ռուսաստանի Դաշնություն) այսուհետ՝ Կողմերը,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997 թվականի օգոստոսի 29-ի Պայմանագրի սկզբունքներով և նպատակներով,

հիմնվելով առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային կապերի զարգացման փոխշահավետության վրա,

հիմնվելով փոխըմռնման, հավասարության և վստահության վրա,

գիտակցելով համագործակցության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը,

եկան փոխադարձ համաձայնության ներքոհիշյալի մասին.

1. Կողմերը հիմնվելով փոխշահավետության սկզբունքի վրա, ձգտելով ձեռնպահ մնալ միմյանց վնաս պատճառող գործողություններից, հաստատում են իրենց ցանկությունը համագործակցելու սույն Հուշագրի դրույթներին համապատասխան՝ գործելով իրենց լիազորությունների շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Կողմերը հաստատակամ են զարգացնելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հեռանկարային ուղղություններ առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով զարգացնելու Արարատի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) տարածքներում տեղակայված տնտեսվարող սուբյեկտների, հիմնարկությունների և կազմակերպությունների միջև տնտեսական կապերը:

3. Կողմերը հաստատում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ միջոցառումների իրականացման համար ծրագրերի, պլանների և հեռանկարային նախագծերի զարգացման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով զարգացնելու համագործակցությունը առևտրատնտեսական, մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում, այդ թվում ապահովվելու Արարատի մարզում (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզում (Ռուսաստանի Դաշնություն) նորարարական տեխնոլոգիաների զարգացում:

4. Կողմերը մտադիր են աջակցություն ցուցաբերելու երկու տարածաշրջանների այն հիմնարկություններին, կազմակերպություններին, ձեռնարկություններին,, որոնք աշխատանքներ են իրականացնում կրթության ոլորտում, կազմակերպում են մշակութային փոխայցեր, նպաստում Արարատի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) տարածքներում տեղակայված տնտեսվարող սուբյեկտների միջև ուղիղ համագործակցության զարգացմանը:

5. Կողմերը պատրաստակամ են իրենց լիազորությունների շրջանակներում աջակցություն ցուցաբերելու մասնագետների, ուսանողների փոխայցերի իրականացմանը, կազմակերպելու ներկայացուցչական ցուցահանդեսներ, [illegible] գիտաժողովներ

հրապարակելու Արարատի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Ռոստովի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) տնտեսության, մշակութային կյանքին վերաբերվող նյութեր:

6. Սույն Հուշագիրը արտահայտում է Կողմերի պատրաստակամությունը առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության վերաբերյալ և Կողմերից ոչ մեկի վրա չի դնում ֆինանսական կամ այլ պարտավորություններ:

Սույն Հուշագիրը ստորագրված է Դոնի Ռոստով քաղաքում 2011 թվականի հուլիսի 7-ին երկու օրինակով՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկուսն էլ ունեն նույն ուժը:

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետարանի
կողմից

Էդիկ Ծամոնի Բաբայան

Ռուսաստանի Դաշնության
Ռոստովի մարզի վարչակազմի
կողմից

Վասիլի Ցուրիկի Գոլուբև